**ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ**

**«Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ պետական կառավարման մարմիններից ստացված դիտողությունների և առաջարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման մասին**

| Առարկության, առաջարկության հեղինակը | Առարկության. առաջարկության բովանդակությունը | ՀՀ ֆինանսների նախարարության դիրքորոշումը (եզրակացությունը) և կատարված փոփոխությունը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1. ՀՀ կրթույան և գիտության նախարարություն | Առաջարկվել է «Ավարտական փաստաթղթերի գովասանագրերի, դասամատյանների, մեդալների, ծրարների, ուսումնական ծրագրերի, մանկավարժական պարբերականների և ուսումնադիտողական պարագաների ձեռքբերում» ծրագրով նախատեսված միջոցների շրջանակներում չխախտելով եռամսյակային համամասնությունները, կատարել համապատասխան փոփոխություններ տնտեսագիտական դասակարգման հոդվածներում՝ «Հատուկ նպատակային այլ նյութեր» հոդվածից 39600.0 հազար դրամը ուղղելով «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածին, քանի որ ավարտական փաստաթղթերը ու դասամատյանները նախարարության կողմից ձեռք են բերվելու որպես տպագրական աշխատանք, այլ ոչ թե ապրանքների ձեռքբերման ձևով | Առաջարկությունը ընդունվել է: |
| 2. ՀՀ արտակարգ իրավիճակնե-րի նախարարություն | Առաջարկվել է նախագծի խոշորացված ցուցանիշների 2-րդ հավելվածում «6. ՀՀ պետական ռեզերվների վարչություն» և «22.12. Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն» բառերը փոխարինել համապատասխանաբար «6. ՀՀ պետական ռեզերվների գործակալություն» և «22.12. Սեյսմիկ պաշտպանության ծառայություն» բառերով: | Առաջարկությունն ընդունվել է |
| 3. ՀՀ էկոնոմիկայի նախարարու-թյուն | Առաջարկվել է Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի կատարման եռամսյակային համամասնություն-ների նախագծի 1.4 կետում.<br>-«ՓՄՁ կենտրոնների պահպանման ծախսեր» բառերը փոխարինել | Առաջարկությունն ընդունվել է |

| Առարկության, առաջարկության հեղինակը | Առարկության. առաջարկության բովանդակությունը | ՀՀ ֆինանսների նախարարության դիրքորոշումը (եզրակացությունը) և կատարված փոփոխությունը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| | «Աջակցություն ՓՄՁ սուբյեկտներին» բառերով,<br>- «ՀՀ զբոսաշրջությանն աջակցության ծառայություններ» բառերը փոխարինել «Զբոսաշրջության աջակցության ծառայություններ» բառերով,<br>- «Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամ» բառերը փոխարինել «Պետական աջակցություն «Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամ»-ի կանոնադրական հիմնախնդիր-ների իրականացմանը» բառերով,<br>«ՀՀ հավատարագրման համակարգի բարեփոխում և հավատար-մագրման ազգային մարմնի ստեղծման ծախսեր» բառերը փոխարի-նել «Պետական աջակցություն «ՀՀ հավատարմագրման համակարգի բարեփոխում և Հավատարմագրման ազգային մարմնի ստեղծում» ծրագրին» բառերով: | |
| 4. ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն | Համաձայն ներկայացված նախագծի ՀՀ 2014թ. բյուջեով պետական գույքի վարձակալությունից եկամուտների հավաքագրումը ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության մասով նախատեսված է 249357,4 հազ.դրամ, սակայն հարկ է նշել, որ 2013 թվականի ըն-թացքում պետական գույքի վարձակալությունից ՀՀ պետական բյուջե 01.12.2013թ. դրությամբ փաստացի մուտքագրված 264740,0 հազ. դրամ գումարից 63794,2 հազ.դրամ գումարը կազմում է նախորդ տա-րիների ընացքում վարձակալների կողմից կուտակած վարձակալա-կան վճարների ապառքի մարումը, իսկ 37156,3 հազ.դրամ գումարը ՊՈԱԿ-ներին անհատույց օգտագործման իրավունքով ամրացված գույքի վարձակալությունից ստացված վարձավճարներն են: 2013թ. հուլիս ամսից մինչ օրս թվով 4 վարձակալած տարածքներ օտարվել են, իսկ թվով 8 վարձակալների հետ կնքված վարձակալության պայ- | Առաջարկությունը չի ընդունվել նկատի ունենալով հետևյալը.<br>1. Նախագծով 2014 թվականի համար վարձակալության վճարների գծով եկա-մուտների գծով նախատեսված 249.4 մլն դրամի դիմաց Վարչությունը առաջար-կում է այն սահմանել 193.8 մլն դրամ կամ շուրջ 55.6 մլն դրամով պակաս:<br>Այդ կապակցությամբ հարկ է նշել, որ 2013 թվականի դեկտեմբերի 17-ի դրութ-յամբ Վարչության գծով պետական գույքի վարձակալության վճարների գծով մուտ-քը արդեն իսկ կազմել է շուրջ 290 մլն դրամ կամ Վարչության կողմից 2014 թվականի համար առաջարկվածի դիմաց |

| Առարկության, առաջարկության հեղինակը | Առարկության. առաջարկության բովանդակությունը | ՀՀ ֆինանսների նախարարության դիրքորոշումը (եզրակացությունը) և կատարված փոփոխությունը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| | մանագրերը վաղաժամկետ լուծվել են, որոնց տարեկան վարձավճարը միասին կազմում է 7085,4 հազ.դրամ:<br>2014 թվականին նախատեսվում է «Երևանի Անանիա Շիրակացու անվան ճեմարան» կրթահամալիր» ՓԲ ընկերությանը վարձակալությամբ տրամադրված անշարժ գույքը ՀՀ կառավարության 10.07.2013թ. թիվ 805-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն նվիրաբերել /ներկայումս իրականացվում են նախապատրաստական աշխատանքներ ՀՀ կառավարության որոշման նախագիծ մշակելու և ՀՀ կառավարություն ներկայացնելու ուղղությամբ/, իսկ ընկերության կողմից վարձակալած անշարժ գույքի տարեկան վարձավճարը համաձայն պայմանագրերի կազմում է 19111,9 հազ.դրամ:<br>Հաշվի առնելով վերոգրյալը, և նկատի ունենալով, որ ներկայումս գործող թվով 131 վարձակալության պայմանագրերով և համաձայնագրերով ՀՀ պետական բյուջե 2014 թվականի ընթացքում մուտքագրման ենթակա գումարը կազմում է 193781,6 հազ.դրամ, առաջարկում եմ 2014 թվականի ՀՀ պետական բյուջեի նախագծում ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության մասով պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությունից հավաքագրման ենթակա տարեկան գումարը սահմանել 193781,6 հազ.դրամ: | շուրջ 96 մլն դրամով ավելի: Հարկ է նշել նաև, որ 2011-2013թթ ընթացքում Վարչության գծով պետական գույքի վարձակալության վճարների գծով առաջացած ապառքների մարումը, ըստ Վարչության, միջինում կազմել է շուրջ 60 մլն դրամ, ինչը նույնպես պետք է հաշվի առնել վարձակալության վճարների գծով եկամուտների 2014 թվականի տարեկան ծրագիրը կազմելիս:<br>2. «Երևանի Անանիա Շիրակացու անվան ճեմարան» կրթահամալիր» ՓԲ ընկերությանը վարձակալությամբ տրամադրված անշարժ գույքը սահմանված կարգով նվիրաբերելու վերաբերյալ ներկայումս որևէ իրավական ակտ չի ընդունված և հետևաբար այդ պատճառով վարձակալության գծով տարեկան ծրագրի 19.1 մլն դրամով նվազեցնելու համար իրավական հիմքեր չկան (հարցը իրավական հիմքերի առկայությամբ անհրաժեշտության դեպքում կարող է քննարկվել տարվա ընթացքում): |
| 5. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե | Առաջարկվել է ՀՀ կառավարության որոշման նախագծում սահմանել, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից Դիլիջանի ուսումնական կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կնքվելիք պայմանագրով նախատեսվում է նաև, որ կապալառու | Առաջարկությունն ընդունվել է: |

| Առարկության, առաջարկության հեղինակը | Առարկության. առաջարկության բովանդակությունը | ՀՀ ֆինանսների նախարարության դիրքորոշումը (եզրակացությունը) և կատարված փոփոխությունը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| | կազմակերպությունը՝<br>- իրականացնում է Կենտրոնի ամբողջական շահագործման համար անհրաժեշտ՝ նախագծա-նախահաշվային փաստաթղթերով նախատեսված տեխնիկական բնութագրերին և արժեքներին համապատասխան վարչական սարքավորումների տեղադրման և մոնտաժման աշխատանքները.<br>- Կենտրոնը կոմիտեին է հանձնում նախագծա-նախահաշվային փաստաթղթերով նախատեսված՝ շահագործման համար պիտանի պայմաններում: | |
| 6. ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | Առաջարկություններ չունի: | |
| 7. ՀՀ արտաքին գործերի նախարարություն | Առաջարկություններ չունի: | |
| 8. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | Առաջարկություններ չունի: | |
| 9. ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն | Առաջարկություններ չունի: | |
| 10. ՀՀ մշակույթի նախարարություն | Առաջարկություններ չունի: | |
| 11.ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | Առաջարկություններ չունի: | |
| 12. ՀՀ առողջապահության նախարարություն | Առաջարկություններ չունի: | |
| 13. ՀՀ բնապահպանության նախարարություն | Առաջարկություններ չունի: | |
| 14. ՀՀ քաղաքաշինության նախարարություն | Առաջարկություններ չունի: | |
| 15. ՀՀ աշխատանքի և սոցիա- | Առաջարկություններ չունի: | |

| Առարկության, առաջարկության հեղինակը | Առարկության. առաջարկության բովանդակությունը | ՀՀ ֆինանսների նախարարության դիրքորոշումը (եզրակացությունը) և կատարված փոփոխությունը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| լական հարցերի նախարա-րություն | | |
| 16. ՀՀ պաշտպանության նախարարություն | Առաջարկություններ չունի: | |
| 17. ՀՀ ոստիկանություն | Առաջարկություններ չունի: | |
| 18. ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտան-գության կարգավորման պետական կոմիտե | Առաջարկություններ չունի: | |
| 19. ՀՀ ազգային վիճակագրա-կան ծառայութուն | Առաջարկություններ չունի: | |
| 20. ՀՀ տարածքային կառա-վարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե | Առաջարկություններ չունի: | |
| 21. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե | Առաջարկություններ չունի: | |
| 22. ՀՀ հանրային ծառայու-թյունները կարգավորող հանձնաժողով | Առաջարկություններ չունի: | |
| 23. ՀՀ տնտեսական մրցունա-կության պաշտպանության պետական հանձնաժողով | Առաջարկություններ չունի: | |
| 24. ՀՀ քաղաքացիական խառայություն | Առաջարկություններ չունի: | |
| 25. ՀՀ ազգային անվտանգութ-յան ծառայություն | Առաջարկություններ չունի: | |

| Առարկության, առաջարկության հեղինակը | Առարկության. առաջարկության բովանդակությունը | ՀՀ ֆինանսների նախարարության դիրքորոշումը (եզրակացությունը) և կատարված փոփոխությունը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 26. Երևանի քաղաքապետարան | Առաջարկություններ չունի: | |
| 27. ՀՀ Սյունիքի մարզպետարան | Առաջարկություններ չունի: | |
| 28. ՀՀ Լոռու մարզպետարան | Առաջարկություններ չունի: | |
| 29. ՀՀ Շիրակի մարզպետարան | Առաջարկություններ չունի: | |
| 30. ՀՀ Տավուշի մարզպետա-րան | Առաջարկություններ չունի: | |
| 31. ՀՀ Արարատի մարզպետա-րան | Առաջարկություններ չունի: | |